

ՈւՏԴ 592/599

Հ.Զ.Գրիգորյան

Կենդանիների ապրելու վայրը ցույց տվող հայերեն անվանումների
կազմության մասին

(Ներկայացված է ակադեմիկոս Ս.Հ. Մովսիսյանի կողմից 1/XI 2002)

Ներկայումս, երբ մեծ ուշադրություն է դարձվում հայոց լեզվի մաքրությանը, մեր լեզուն հայերեն անվանումներով հարստացնելուն, շատ կարևոր է բոլոր մասնագիտությունների բնագավառներում նույնպես հետևողական լինել այս սկզբունքին, մասնավորապես կենդանաբանության բնագավառում, որտեղ կենդանիների բազմաթիվ անվանումների չհիմնավորված, խառնաշփոթ թարգմանություններ կան:

Ուսուցման ընթացքում այս հանգամանքը դժվարություններ է առաջացնում թե՛ սովորողների, թե՛ սովորեցնողների՝ ուսուցիչների, դասախոսների համար: Դժվարությունների առջև են կանգնում նաև թարգմանիչները, բնագետներն ու բանասերները: Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ կենդանու անվան մեջ նշվում է նրա ապրելու աշխարհագրական վայրը կամ էկոլոգիական միջավայրը (գետ, լիճ, ծով, օվկիանոս, ցամաք): Նմանատիպ բազում թարգմանություններում դիտվում է կամայական, սուբյեկտիվ մոտեցում: Այսպես, որոշ գրականության մեջ *нильский крокодил*-ը, *гангский аллигатор*-ը թարգմանված են *Նեղոսի կոկորդիլոս*, *Գանգեսի ալիգատոր* [1,2]: Մի այլ տեղ՝ *Նեղոսյան կոկորդիլոս*, *Գանգեսյան ալիգատոր* [3,4]: *Сибирский осетр*-ը թարգմանված է *սիբիրյան մորե*, *սիբիրական մորե* [5,6], *Ухрейри мորե* [1], *хариус*-ը՝ *սիբիրյան խարիուս*, *սիբիրական խարիուս* [1,2,5]: Ունենք նաև այսպիսի թարգմանություններ. *Դադստանի մողես* և *դադստանյան մողես* [1,3], *աֆրիկյան ջայլամ* և *աֆրիկական ջայլամ* [2,3], *Սախալինի մորե* և *սախալինյան մորե*, *Ամուրի կարմրաձուկ* և *ամուրյան կարմրաձուկ* [1,3,4]: Ձկների վերաբերյալ ունենք նաև *Սևանի կողակ*, *Քուռի կողակ*, բայց գետում բնակվող այլ տեսակներին անվանում են՝ *դանուբյան տայմեն*, *ազովյան փորաձուկ*, *կասպիական քարալեզ*, *բենգալյան օձաձուկ* և այլն [1,3,4]:

Դասագրքերում և ձեռնարկներում միևնույն ցեղին պատկանող կենդանիների անվանումները թվարկելիս ապրելավայրը ցույց տվող բաղադրիչին տարբեր վերջածանցներ կամ վերջավորություններ են տրված, ինչպես, օրինակ, *բեղլու Արաքսի*, *բեղլու արալյան*, *բեղլու Սևանի*, *բեղլու դրիմյան* [1,3]:

Երբեմն անհետևողականություն է նկատվում նույն հեղինակի մոտ՝ միևնույն կենդանու անունը նշելիս:

Նկատի ունենալով վերը շարադրվածը, առաջարկում ենք որոշակի սկզբունք մտցնել կենդանիների ապրելավայրը նշող անվանումները թարգմանելիս: Այսպես, եթե կենդանին ապրում է գետում կամ լճում, ապա նպատակահարմար է անվան ապրելավայրը ցույց տվող բաղադրիչը դնել սեռական հոլովով (որոշ դեպքերում այդպես է ընդունված ավանդաբար). *Նեղոսի կոկորդիլոս*, *Գանգեսի գավիալ*, *Ամուրի կարմրաձուկ*, *Չուդի սիգ*, *Սևանի սիգ* և այլն:

Եթե կենդանին ապրում է ծովում կամ օվկիանոսում, ապա ապրելավայրը նշող բաղադրիչին առաջարկում ենք ավելացնել **-յան** ածանցը. սևծովյան, կասպյան, արալ-

յան, կարիքյան և այլն: Իսկ այն դեպքերում, երբ կենդանիների անվանումների մեջ նշվում է ազգություն արտահայտող կամ էթնիկ բնակչություն ունեցող երկրի անունը, ապա այդ անվան արմատին պետք է ավելացնել **-ական**՝ հայկական, թուրքմենական, հնդկական, նորգելանդական և այլն, մյուս դեպքերում՝ **-յան** վերջածանցը՝ սիբիրյան, դաղստանյան, դրիմյան, աֆրիկյան, մոզամբիկյան և այլն:

Անշուշտ, վերոնշյալ առաջարկները հաշվի առնելով, մեծապես կշահի կենդանաբանական տերմինաբանությունը, ուրեմն և՛ գիտությունը, և՛ հայոց լեզուն, ինչպես նաև մենք կխուսափենք կենդանիների անվանումների նկատմամբ տարակարծություններից:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտ

А.Дж. Григорян

О написании армянских названий животных, указывающих место их обитания

С целью устранения произвольного перевода на армянский язык названий животных, указывающих место их обитания, в статье предлагается применение конкретных суффиксов или окончаний для тех случаев, когда место обитания животного - река, озеро, море или суша (страна, материк и т.д.).

Գրականություն

1. *Համբարյան Մ.Ե.* Ողնաշարավորների կենդանաբանություն: 3-4 հատ, Երևան, 1999-2002:

2. *Ջիվանյան Կ.Ա., Դանիելյան Ֆ.Դ., Ռուխկյան Ռ.Հ., Յավրույան Է.Գ.* - Կենսաբանություն: Կենդանիներ (դասագիրք հանրակրթական դպր. 7-րդ դաս. համար): Երևան, Մակմիլան-Արմենիա, 2000:

3. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք Ա-Դ, Երևան, 1992-2000:

4. *Նաումով Ս.Պ.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Պրակ. I, Երևան. 1956, Պրակ. II, Երևան, Հայպետուսմանկ հրատ., 1958 (թարգ. ռուսերենից):

5. *Ջաբարյան Խ.Ա.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Ուս. ձեռնարկ, Երևան, 1979:

6. *Մելքումյան Լ.Ս.* Կենդանաբանություն կենդանիների էկոլոգիայի հիմունքներով (քորդավորներ): Ուս. ձեռնարկ, Երևան, 1988: